**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

« » 2025 թ. N

*Ձեր՝ 30.07.2025թ.
N Ե-65*

**«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏԻԿԻՆ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ
info@prwb.am**

Հարգելի՛ տիկին Մելքոնյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ուղղած Ձեր գրության կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «Լեռնային Ղարաբաղից տեղահանվածներին կեցության և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության միջոցառումը և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1763-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) շրջանակում Հայաստանի Հանրապետությունում սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունքով իրեն կամ իր ընտանիքի անդամներին **(ամուսին, մինչև 18 տարեկան երեխայի ծնող)** պատկանող բնակվելու համար նախատեսված անշարժ գույք ունեցող անձինք որոշմամբ հաստատված միջոցառման շահառու չեն հանդիսացել (կամ աջակցությունը տրամադրվել է մասնակի), բացառությամբ, երբ տվյալ անձը՝

ա. Հայաստանի Հանրապետությունում ունի բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակվելու համար նախատեսված միայն մեկ անշարժ գույք, որի բաժնեմասին (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով) համապատասխան մակերեսը փոքր է 20 քառակուսի մետրից,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշման շրջանակներում բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագիրն իրացրած անձ է:

Միաժամանակ հայտնում եմ նաև, որ որոշմամբ հաստատված սոցիալական աջակցության միջոցառման տրամադրման ժամկետը և ֆինանսավորումն ավարտվել է, որի շրջանակում դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը սահմանված էր մինչև 2025 թվականի մարտի 15-ը ներառյալ:

Հարկ է նաև նկատել, որ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի

անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից:

Երեխաները, ինչպես բխում է վերը նշված իրավակարգավորումից, ունեն բնակելի տարածության սեփականատեր հանդիսացող ծնողի զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իրենց բնակության վայրից: Ընդ որում, անգամ ծնողական իրավունքներից զրկելու (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մաս) կամ սահմանափակման (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս) դեպքում երեխան իր այդ իրավունքը պահպանում է:

Միաժամանակ հայտնում եմ, որ որոշման շրջանակներում շահառուների տվյալները համեմատվում (համադրվում) են նաև քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների հետ:

9/1/2025

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MURADYAN SAMVEL 1104630109 **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատ.՝ Զ.Սարգսյան
Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների
վարչության ընտանիքի սոցիալական գնահատման բաժին
հեռ.՝ (010) 52 87 79